ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԾՆՈՒՆԴ
(1811)

ՓՐԱՆՍՈՒԱ ԿՈՊՊԷԷՆ՝ թարգ. Մ. Ծաւասարդեանի

1811 թուականի Մենդեան նախապօնակն է, գիշերուայ ժամը տասից ի վեր, Նապոլէօնը պարապում է մենակ իր կաբինետում Տիւլիլրիի պալատի մէջ։

Ընդարձակ սենեակը գրեթէ բոլորովին մութ է։ Դէս ու դէն՝ խաւարի մէջ ցոլում են մի քանի ոսկեզօծ առարկաներ տարտամօրէն, մի անտեսանելի պատկերի կրկալը, բազկաթոռի յենարանին ծայրերը զարդարող երկու առիւծի գլուխներ, վարագոյրը բռնող մի մեծ ծոպ։ Զոյգ ջահերի մեղրամոմերը մետալէ լուսամփոփի տակից լուսաւորում են միայն մի մեծ սեղան՝ բեռնաւորուած խառն ի խառն աշխարհագրական ատլասներով և սպաւարահատոր արձանագրութիւններով, որոնք կանաչ քիմուխտի կազմ ունէին ու իրանց վրա կրում էին N. և թագադրոշմ։

Ահա մօտ երկու ժամ կը լինի, որ Տէրը աշխատում է. աշխատում է աշխարհագրական քարտէզների ու իր զօրքերի բռնած դիրքերի վրա ահագին ճակատը խոնարհած, որ կիսուած է սև քոչորով, մազերով լեցուն իր ճակատը, որը ծանր է որպէս ինքը այն աշխարհը, որին տիրել է մտածում։

Բաց ատլասը ներկայացնում է Ասիան. ու կայսրի նեարդոտ, կանացի ու սքանչելի ձեռքի ցուցամատը, որոնում է դանդաղաբար հեռու-հեռու Պարսկաստանի վրայով մի ճանփա դէպի Հնդկաստան,

Այո, դէպի Հնդկաստան։ Ցամաքային ճանփով։ Ինչու չէ։ Քանի որ իր նաւատորմը յաղթուած ու ոչնչացած է, տիրողը այս ուղին

ունի միայն այնտեղ գնալու համար՝ արմաւենիների առասպելական անտառների միջով ուղղակից ունենալով իր արծիւները, որոնց ոսկին փայլփլում է պողպատե սուինների միջից, Անգլիայի հենց սիրտը խոցելու համար, հենց սիրտը, նրա գաղութային պետութիւնը, նրա գանձը։

Ինքն ունի արդէն Կեսարի ու Շարլըմանի մեծութիւնը, կամենում է սրանալ նաև Ալէքսանդրինը։ Նա անրջում է այդ առանց զարմանալու։ Նա ճանաչում է արդէն Արևելքը, և թողել է այնտեղ իր մասին մի անմահ առասպել։ Նեղոսը տեսաւ նրան մի օր երկարամազ հասարակ գեներալի համազգեստով ուղտի կռնակը հեծած։ Գանգէսի ափերին, զորշ սերտուկաւոր ծանրակշիռ Կայսրին հարկաւոր կը լինի Պերոզի փիղը։ Ինքը գիտէ թէ ինչպէս են քշում ժողովուրդներին, թէ ինչպէս են նրանց մոլեռանդ դարձնում։ Այնտեղ նա կը հրամայի կինոռնագոյն դէմքերով և գլուխներին սպիտակ մարմաշէ ապարոշ փաթթած զինուորներին, կը տեսնի իր սպայակոյտին միացած թանգագին ակներով զարդարուն ռաջաներին. և իր ճակատագիրը կը հարցնի շողակնեայ գայիսոնիդ վեր կարկառած տասը ձեռնանի հրեշաւոր կուռքերից, քանի որ երբեմն Եգիպտոսում՝ գրանիտե տափակադէմք սֆինքսը, որի առջև երկու ձեռքը իր թուրին յենած երազում էր, չայտնեց նրան իր գաղտնիքը։

Կայսր Եւրոպայի. Սուլթան Ասիայի։ Ահա այն միակ երկու տիտղոսը, որ կը փորագրեն նրա դամբանի վրայ։ Մէկ արդելք միայն. լայնածաւալ Ռուսաստանը։

Բայց որովհետև չկարողացաւ գրաւել Ալէքսանդրի տապանաղ բարեկամութիւնը՝ կընկճէ նրան։ Եւ Կայսրի փոքրիկ ձեռքը թերթում է ազահաբար կանաչակազմ խոշոր հատորներն ու արձանագրութիւնները, որոնք միաբերան ցոյց են տալիս նրա անհամար զօրքի թիւը, որ հաւաքւում է արդէն Նեմանի ափերին։ Այո, նա կը յաղթէ Հիւսիսի ինքնակալին և կը քշէ նրան, այդ արդէն հպատակ ցարին իր վայրենի հեծելազօրք օրդուներով դէպի յաղթութիւնը Արևելքի։

Կայսր Եւրոպայի. Սուլթան Ասիայի։ Այս գործը վեր չէ նրա ցանկութիւնից ու հանճարից։ Եւ երբ այդ իրականանայ, նրա գերահրաշ պետութիւնը երկիւղ չի ունենայ երբէք բաժան-բաժան

լինելուց տեղապահների ձեռքով ինչպէս երբեմն Մակեդոնացուն։ Մարտի քանից ի վեր Կայսրը մի որդի ունի, իր փառքի ու մեծութեան ժառանգը. ու կայսրի շրթունքների վրայ ծաղկում է մի գեղեցիկ ժպիտ՝ մտաբերելով անդորը պալատում իրեն այնպէս մօտ քնացող երեխային։

Սակայն, յանկարծ, գլուխը բարձրացնում է զարմանքի շարժումով։ Այնպէս լաւ զոցած կաբինէտում, որի հատ վարագուրները իջեցրած են, որտեղից է լսում այն տարօրինակ և խորունկ շրջիւնը։ Կարծես թէ մետաքսէ պատուհանների վրայ ոսկէթելով բանուած խոշոր մեղուները բոլորն էլ սկսում են բզզալ։ Կայսրը լսում է աւելի ուշադիր, և ահա այդ շչուկի մէջ նա որոշում է արոյրի թռթիռը։

«Աա, այո... Մնուանդ... Գիշերային հսկման ժամն է»։

Եւ իրօք, Պարիզի բոլոր եկեղեցիների զանգակներն են, որ պօնում են Յիսուսի Մնուանդը. այն զանգակները, որ Բոնապարտը երբեմն կախել տուեց բոլոր աշտարակներից և զանգատներից, երբ նա, իրր խաղաղարար բդեշխ, հաշտեցնում էր Ֆրանսիայում այնքան իրար թշնամի եղբայրներին։

Քանի քանի անգամ են ղողանջել այդ զանգերը իր կայսրի պատուին, փառաւոր մաղթանքների առիթով։ Ու ինչպէս զանգահարում էին աւելի ջերմ և առաւել ուժգին, հազիւ քանի մի ամիս առաջ, Հռոմի թագաւորի ծննդեան օրը. յիշատակելի թուականն, երբ երկինքը հերոսին տրամ ընծայելով կարծես թէ դաշինք էր կնքում նրա հետ՝ ճանաչելով նրա արարքի օրինականութիւնը ու խոստանալով նրան յարատեւութիւն։

Սակայն այս երեկոյ զանգերը ղողանջում են նոյնպէս զարթ, նոյնպէս յաղթական, ինչպէս Աուստերլիցի կամ Վագրամի առիթով, ղողանջում են պարզ ու սառը գիշերուայ մէջ անմեղ մանուկի համար, մի հիւանդ զաւակի պարճառով ծնուած ախոռի մէջ շատ-շատ պարիսներ առաջ, մինչդեռ խորհրդաւոր ձայները աղաղակում էին աստեղազարդ երկնակամարի տարածութեան մէջ «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն»։

Կայսրը ականջ է դնում Մնանդեան զանգերի ղողանջին։ Նա երազում է, մտաբերում է իր մութ վայրենի մանկութիւնը, Այա-

չիօի տաճարում իր հօրեղբայր Թեմերէցի գիշերային ճրագալոյցը, բազմանդամ գերդաստանի վերադարձը դէպի հին բնակարանը, որը վկայ է եղել հպարտութեամբ կրած այնքան խեղճութեան, յիշում է նաև իր մայր տանտիկնոջ գեղեցկութիւնը, որ նախագահում էր աղքատիկ նաւակատիկին, երբ նրանք շագանակներ էին ուտում։ Իր որդին, յաղթող արքայի ու Աւստրի Մեծ դուքսի սեփական զաւակը կանգիտանայ այդ թշուառութիւնները, նա միայն աշխարհի տէրը կը լինի։

Դուրսը, սառնամանիք գիշերւայ մէջ, զանգերը հնչում են շարունակ Մենդեան տօնը։

Տիւլիլրի պալատի դռան մօտ մորթէ գդակը գլխին՝ հին զինուորը քայլում է իր պահակատան առջև զայրացկոտ քայլերով ոտները քիչ տաքացնելու համար. նա այդ վայրկեանին մտաբերում է գուցէ գիւղում իր մօր ծնկների վրայ երբեմն բերան սովորած մի աղօթք կամ մի մեղեդի. ու ժպտում է մեղմիւ իր բիրտ բեխերի տակից, մուրի մէջ դրուած Յիսուս-Մանուկին։ Իսկ ինքը Կայսրը չի լսում զանգերի բարեպաշտ կոչը. նա միայն իր որդու մասին է մտածում և յանկարծ անդիմադրելի ցանկութիւն է զգում նրան տեսնելու։ Կանգնում է ոտի ու ծափ է զարկում։ Բացւում է իսկոյն պաստառների յետևում մի դաղտնի դուռ, Ռուստանը երևան է գալիս։ Տիրոջ մի ակնարկի վրայ վերցնում է ջահերից մէկը ու Կայսրը լուսաւորուած հաւատարիմ մամլուքի առաջնորդութեամբ, ամայի նրբանցքներով դնում է ուղղակի դէպի փոքրիկ թագաւորի բնակարանը. մտնելով այնտեղ հեռացնում է նշանացի դայեակին ու յանկարծ զարթնած կանանցը և մնում է կանգնած հրաշաձնունդ նորամանուկի օրօրոցի առջև։

Հռոմի թագաւորը քնած է խորունկ քնով։ Ճերմակեղէնի ու ժանեկիկների սպիտակութեան մէջ, որի վրայով անցնում է Պապի Լեգիօն շքանշանի մեծ ժապաւէնը։ Փակ աչիկներով սիրունիկ դէմքը կիսով չափ թաղուած բարձի մէջ ու թաթիկներից մէկը, բոլորովին փոքրիկ, փափկիկ ու պաշտելի, վերմակի վրայ հանգչած՝ մանկական մարմնի երկու կտոր էն ներկայացնում. ու այս անարատութեան, այս մաքրութեան և անմեղութեան վրայից, ինչպէս երեխան է օրօրոցում, անցնում է կաս-կարմիր լայն ժապաւէնը, կարծես մի արիւնի վտակ, կարծես արիւնաներկ մի գետ, որը հոսեցնելու

են այն յուսով, որպէս զի այդ դեռ նազուկ գլուխը կրէ մի օր թագերից ամենածանրը, և այս պարիկ թաթիկը, հիմա դեռ քնքոյշ և գեղեցիկ ինչպէս մի ծաղիկ, բռնէ ապագայում գայիսոն-ների մի ամբողջ կապոց։

Նապոլէօնը դիտում է իր որդուն։

Ոչ մի ժամանակ մարդկային հպարտութիւնը այնպէս չէ փաղաքշել նրա սիրտը. նա երևակայում է, թէ ինչպէս իր արքունիքի մեծամեծ աստիճանաւորները, Հոմերոսի հերոսներից աւելի հաչակաւոր գեներալները, ոսկէբան շքազգեստ նախարարներն ու սենատորները խոնարհւում են այս օրօրոցի առաջ երկիւղած յարգանքով. և թէ նոյն իսկ ուրացող ժակոբէնները, այդ ծեր արքայասպանները, որոնք այժմ ֆկայսերական նշանագգեստ հագած՝ հազիւ կը համարձակւեն այս մանկական թաթիկը համբուրած լինելու շնորհովը պարծենալու։

Կայսրը մտածում է և հսկման զանգերի ղողանջից զոյացած՝ շփոթ աղմուկի միջից, թւում է իրեն թէ լսում է վաշտերի օրօրուն քայլուածքը ու ռազմարկղների դղրդոցը այնտեղ հեռու Գերմանիայի ու Լեհաստանի սառցապատ ճանապարհների վրայ։ Գինովցած ծնողական ինքնասիրութեամբ, առաւել քան երբէք նա մտածում է Մեծ Զօրքի մասին, Ռուսաստանն ու Հնդկաստանն փիրելու մասին, և երդւում է ինքն իրեն Հին Աշխարհի բոլոր գահերը տալ իր ժառանգին։ Նրան տւել է արդէն իբր չանչխուր Սուրբ Պետրոսի քաղաքը. նորածինը կունենայ շուտով իր խաղալիքների շարքում՝ նաև ուրիշ սուրբ քաղաքներ։

Մեքքայի Էմիր. Բինարէսի Ռաջա։ Ամաւասիկ տիտղոսներ, որոնք վայել են Հռոմի թագաւորին։

Ա՛խ, ինչո՞ւ Ֆրանսիայի կանայք առաւել արգաւանդ չեն։ Ինչո՞ւ նա այդ անյաղթելի առաջնորդը իր հրամանի տակ չունի մէկ մէլիոն, երկու միլիոն զինւոր։ Այն ժամանակ տիեզերքը ամբողջ, ամբողջ երկրագունդը կը դնէր այդ փոքրիկ թաթիկի մէջ։

Նա երազում է, խուլ դէպի սուրբ կոչնակների հնչիւնը, առանց մտածելու Նրա մասին, որ թագաւորում է երկնքում և ամենամեծ պետութիւններին նայում է իբրև մրջիւնանոցների վրայ։ Նա երազում է, առանց տեսնելու ապագայում Բերեզինայի

ՀԻՒՆԻ տակ թաղուած իր անթիւ զօրքը, առանց նկատելու իր արծիւների վերջին յաղթանակն ու Վատերլոի սրբազան գունդի ոչնչացումը անգլիական միտրայլեզի միջոցով, առանց տեսնելու Ովկիանի մէջ այն ապառաժը, ուր իրեն Պրոմեթէոսի տանջանքն է, սպասում, առանց տեսնելու նամանաւանդ Եէօնբրունի պուրակում, աշնային երկինքի տակ, այն տժգոյն և փխուր ճերմակ համազգեստ հագին աւստրիական զօրքի նշանը կրող ջահէլ մարդուն, որ խաշամի մէջ քայլում է ու հազում։

Եւ մինչդեռ Կայսրը հետևում է իր հրէշաւոր քիմերային, երևակայում է իր որդու ու նրա ժառանգորդների թագաւորութիւնը ամբողջ աշխարհիս վրայ, և մինչդեռ պատկերացնում է ինքն իրեն, Նապոլէօնը ապագայում և աւանդութեամբ դարձած մի առասպելական դիւցազն, մի նոր Մարս, իր տասներկու մարշալների Զոդիակոսում մի յաղթանակող արևաստուած—զանգակները հնչում են շարունակ յաղթանակօրէն, զուարթօրէն, մոլեգին Բեթղեհեմում ծնուած խեղճ փոքրիկ երեխայի պատին, որ իսկապէս փրրել է աշխարհիս տասնուինները հարիւր տարի առաջ, ոչ թէ արիւնով և պատերազմներով, այլ խաղաղութեան ու սիրոյ խօսքով և որ կ'իշխի հոգիների վրայ յաւիտեանս յաւիտենից։